ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/118

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոք բերող՝ «Ցիկլոիդ» ՍՊԸ

Համանման բողոք բերող՝ «Ֆոտոն» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, Արցախի Հանրապետությունից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություններ) կողմից համապատասխանաբար 28.11.2020թ.-ին ներկայացրած բողոքը և 02.12.2020թ.-ին ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ Բողոքներ) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն և «Ֆոտոն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքներով խնդրել են՝ դադարեցնել կամ անվավեր ճանաչել հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված 4.3-րդ կետով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտերը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 28.11.2020թ.-ին:

30.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/118 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 02.12.2020թ.-ին:

03.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/118 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.12.2020թ.-ին:

2. **<u>«Ցիկլոիդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Ցիկլոիդ» ՍՊԸ-ն 28.11.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ս.թ. նոյեմբերի 10-ին Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է Արցախի Հանր. Երևան ժամանած ընտ. /անձանց պատերազմ մեկնած անձանց ընտ. և վիրավոր զինվորների ընտ. սոց աջակցություն տրամադրելու նպատակով կազմակերպվել է սննդամթերքի ձեռք բերման ընթացակարգ:

Վերոնշյալ ընթացակարգին մասնակցությունն է ապահովել նաև Ցիկլոիդ ՍՊԸ-ն:

Ցիկլոիդ ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել մի քանի լոտերի մասով և ըստ մրցույթի գնահատող հանձնաժողովի 13.11.2020 թվականի թիվ 2 արձանագրության համաձայն մի

շարք չափաբաժինների մասով ճանաչվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ինչի համար հիմք է ընդունվել արձանագրության 3.1 կետով նշված աղյուսակը:

Սակայն միևնույն արձանագրության համաձայն նշվել է, որ Ցիկլոիդ ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ, գնային առաջարկում և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա փաստաթղթերում /հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման/ բառերի փոխարեն նշվել են /գնանշման հարցման բառերը/: Մրցույթի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը, ինչպես նշվել է արձանագրությունում, որոշել է մեր ընկերության հայտը մերժել, քանի որ գնային առաջարկը ենթակա չէ շտկման:

Մենք գտնում ենք, որ Պատվիրատուն ի դեմս մրցույթի գնահատող հանձնաժողովի գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ցիկլոիդ ՍՊԸ-ի հայտը նման խախտման համար ենթակա չէր մերժման, քանի որ նույն մրցույթի հանձնաժողովը կարող է ներկայացված դիմում-հայտարարության մեջ, գնային առաջարկում և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նույնականացնել ընկերությանը, պատվիրատուին, գնման ընթացակարգի ծածկագիրը, ներկայացված գնման առարկաները ըստ լոտերի:

Գտնում ենք, որ այդ սխալը չէր կարող դիտարկվել որպես էական նշանակություն ունեցող խախտում, իսկ մերժելու արդյունքում մեր հայտը, հաղթող են ճանաչվելու ավելի բարձր գին ներկայացրած մասնակիցներ, ինչի արդյունքում ՀՀ պետ. բյուջեն կարող է կրել էական վնասներ:

Գտնում ենք, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ հոդվածների պահանջները և թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը սխալ մերժելով մեր հայտը:»:

Վերոգրյալների հիման վրա, «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձից խնդրել է՝ դադարեցնել կամ անվավեր ճանաչել հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված 4.3-րդ կետով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. **<u>«Ֆոտոն» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 02.12.2020թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ս.թ. նոյեմբերի 10-ին Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է ԱՀ-ից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռբերման ընթացակարգ:

Նշված ընթացակարգին մասնակցություն է ապահովել Ցիկլոիդ ՍՊԸ-ն, որը բողոք է ներկայացրել վերը նշված ընթացակարգի վերաբերյալ (հրապարակվել է gnumner.am կայքում 30.11.2020թ.): Մրցույթի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշում է կայացրել Ցիկլոիդ ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ գնային առաջարկը ենթակա չէ շտկման:

Քանի որ ՖՈՏՈՆ ՍՊԸ-ն ևս հայտ է ներկայացրել ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 ծածկագրով հրատապ մեկ անձի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մի քանի չափաբաժինների մասով և մերժվել է գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման նույն հիմքով այնպես, ինչպես Ցիկլոիդ ՍՊԸ-ն, ՖՈՏՈՆ ՍՊԸ-ն ևս բողոքարկում է գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը և հայտնում է հետևյալ՝

Ըստ մրցույթի գնահատող հանձնաժողովի 13.11.2020 թվականի N2 արձանագրության համաձայն՝ մի քանի չափաբաժինների մասով ճանաչվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, ինչի համար հիմք է ընդունվել արձանագրության 3.1 կետով նշված աղյուսակը: Սակայն միևնույն արձանագրության համաձայն նշվել է, որ ՖՈՏՈՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության /հավելված 1/ մեջ, գնային առաջարկում /հավելված 2/ և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված 1.1/ առկա փաստաթղթերում «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման» բառերի փոխարեն նշվել են «գնանշման հարցման բառերը»: Այս դեպքում նույնպես մրցույթի գնահատող հանձնաժողովը մերժել է ՖՈՏՈՆ ՍՊԸ-ի հայտ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

Գտնում ենք, որ ՖՈՏՈՆ ՍՊԸ-ի հայտը նման խախտման համար ենթակա չէր մերժման, քանի որ մրցույթի գնահատող հանձնաժողովը կարող էր ներկայացված Հավելված 1-ում, Հավելված 2-ում, Հավելված 1.1-ում նույնականացնել ընկերությանը, պատվիրատուին, գնման ընթացակարգի ծածկագիրը, ներկայացված գնման առարկաները ըստ չափաբաժինների:

Գտնում ենք, որ Մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ հոդվածների պահանջները և թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը սխալ մերժելով մեր հայտը:

Գտնում ենք, որ այդ սխալը չէր կարող դիտարկվել որպես էական նշանակություն ունեցող խախտում, իսկ մերժելու արդյունքում մեր հայտը հաղթող են ճանաչվելու ավելի բարձր գին ներկայացրած մասնակիցներ:»:

Վերոգրյալների հիման վրա, «Ֆոտոն» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձից խնդրել է՝ դադարեցնել կամ անվավեր ճանաչել հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված 4.3-րդ կետով «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

4. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքների վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**.

Բողոքներ քննող անձը 30.11.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/17714-2020 և 03.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/17902-2020 գրություններով դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից 28.11.2020թ.-ին և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 02.12.2020թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստերի օրվա, ժամի և վայրի մասին՝ չի ապահովել մասնակցությունը նշանակված նիստերին:

Պատվիրատուն 02.12.2020թ.-ին ներկայացրած թիվ 02/61-119694h և 07.12.2020թ.-ին ներկայացված 02/61-120999h գրություններով, ներկայացնելով «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարությամ գտնվող ԳԲՔԱ-ԼՕ-2020/118 գործով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի 28.11.2020 թվականին և «Ֆոտոն» ՍՊԸ-ի 02.12.2020 թվականին ներկայացրած բողոքների վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի շրջանակում գնման հայտ է

ներկայացրել Ցիկլոիդ ՍՊ ընկերությունը և «Ֆոտոն» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ բողոքաբեր):

Վերը նշված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնահատելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը 13.11.2020 թվականի թիվ 2 արձանագրության 4.1 կետի «զ» ենթակետով արձանագրել է հետևյալը.

«ԱՁՈՒՌ» ՍՊԸ-ի և «Հմայակ Վարդանյան Գեղեցիկի» ԱՁ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: «Գևորգ Գևորգյան Ալեքսանի» Ա.Ձ-ի, «ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ-ի, «Բնական Բարիքներ» ՍՊԸ-ի, «ՆՈՐՔ-7» ՍՊԸ-ի, «Սավա» ՍՊԸ-ի, «Դանինի» ՍՊԸ-ի, «Իմոբիլիար» ՍՊԸ-ի, «Կառլեն Առաքելյան Նորիկի» ԱՁ-ի, «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես.

«Դանինի» ՍՊԸ-ի, «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ (հավելված 1), գնային առաջարկում (հավելված 2) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 1.1) առկա փաստաթղթերում՝ «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման» բառերի փոխարեն նշված են «գնանշման հարցման» բառերը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի (գնային առաջարկը ենթակա չէ շտկման) մերժեց նշված մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը:

Ինչ վերաբերում է բողոքաբեր պահանջի, որի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ պատվիրատուն ի դեմս մրցույթի գնահատող հանձնաժողովի գործել է ոչ իրավաչափ, քանի «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտը նման խախտման համար ենթակա չէր մերժման քանի որ նույն մրցույթի հանձնաժողովը կարող է ներկայացված դիմում-հայտարարության մեջ, գնային առաջարկում և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նույնականացնել ընկերությանը, պատվիրատուին, գնման ընթացակարգի ծածկագիրը, ներկայացված գնման առարկաները՝ ըստ լոտերի և գտել, որ այդ սխալը չէր կարող դիտարկվել որպես էական նշանակություն ունեցող խախտում, իսկ մերժելու արդյունքում վերջինիս հայտը հաղթող են ճանաչվել ավելի բարձր գին ներկայացված

մասնակիցներ, ինչի արդյունքում ՀՀ պետական բյուջեն կարող է կրել էական վնասներ, ապա նշեմ հետևյալը.

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի համաձայն՝ Գնում կատարելու ընթացակարգերն են էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գնանշման հարցումը և մեկ անձից գնումը:

Երևանի քաղաքապետարանը հայտարարելով «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով մեկ անձից գնումը կատարելու ընթացակարգ հիմք է ընդունել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2020 թվականի հունիսի 2-ի N 154-Ա հրամանով հաստատված և նոյեմբերի 5-ին պաշտոնական տեղեկագրում հրապարակված «Գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը»:

Պատվիրատուի կողմից հայտարարված գնման ընթացակարգի հրավերում հստակ սահմանված են մասնակիցների կողմից գնման հայտով ներկայացվելիք հավելվածների լրացման կարգը, իսկ բողոքաբերի կողմից գնման հայտում ներկայացված փաստաթղթերը (գնային առաջարկում) լրացված էին վերը նշված կարգի խախտմամբ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ ներկայացված բողոքը իրավաչափ չէ և ենթակա է մերժման:»:

5. **<u>ԳԲՔԱ-ԼՕ</u>**-2020/118 **<u>բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Արցախի Հանրապետությունից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 10.11.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապության

հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն, իսկ 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

iii. «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից՝

- թիվ 1 հավելվածով ներկայացրած գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ»:

- թիվ 1.1 հավելվածով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ»:

- թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկում մեկ հատվածում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ», իսկ մյուս հատվածում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «գնանշման հարցման ընթացակարգ»:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.11.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ (հավելված 1), գնային առաջարկում (հավելված 2) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 1.1) առկա փաստաթղթերում՝ «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման» բառերի փոխարեն նշված են «գնանշման հարցման» բառերը:

v. Նույն արձանագրության 4.3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով (գնային առաջարկը ենթակա չէ շտկման), որոշել է Ընկերությունների կողմից ներկայացված հայտերը մերժել:

6. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից 28.11.2020թ.-ին ներկայացված բողոքը և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 02.12.2020թ.-ին ներկայացված համանման բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է

անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Արցախի Հանրապետությունից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 10.11.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Արցախի Հանրապետությունից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/ պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով սննդամթերքի ձեռքբերման նպատակով 10.11.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից, իսկ 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից՝

- թիվ 1 հավելվածով ներկայացրած գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ»:

- թիվ 1.1 հավելվածով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ»:

- թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկում մեկ հատվածում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ», իսկ մյուս հատվածում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «գնանշման հարցման ընթացակարգ»:

Հանձնաժողովի 13.11.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ (հավելված 1), գնային առաջարկում (հավելված 2) և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (հավելված 1.1) առկա փաստաթղթերում՝ «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման» բառերի փոխարեն նշված են «գնանշման հարցման» բառերը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Ընկերությունների կողմից ներկայացված հայտերը մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն նաև արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների

կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում Հավելված N 1-ում, Հավելված N 1.1-ում գնման ընթացակարգի ձևը նշվել է ճիշտ, այն է՝ «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ», իսկ Հավելված N 2-ում մեկ հատվածում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ», իսկ մյուս հատվածում որպես գնման ընթացակարգի ձև նշվել է «գնանշման հարցման ընթացակարգ»:

Տվյալ պարագայում Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնահատող հանձնաժողովը 13.11.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4.1-րդ կետով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա թիվ 1 և թիվ 1.1 հավելվածներում արձանագրելով հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերությունների կողմից Հավելված N 1-ում, Հավելված N

1.1-ում ճիշտ է նշվել գնման ընթացակարգի ձևը և այն ամբողջությամբ համապատասխանում է Հրավերով սահմանված պայմաններին:

Ինչ վերաբերում է Հավելված N 2-ում՝ գնային առաջարկի մեկ հատվածում՝ Ընկերությունների կողմից գնման ընթացակարգի ձևը սխալ նշելուն, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն պարագայում գնահատող հանձնաժողովը ներկայացված գնային առաջարկներում հնարավորություն է ունեցել նույնականացնել գնման ընթացակարգի ծածկագիրը, գնման առարկայի անվանումը և պատվիրատուի անվանումը, համադրել չափաբաժինների համարները ապրանքների անվանումների հետ, որպիսի պայմաններում վերոնշյալ խախտումը չէր կարող դիտարկվել որպես էական նշանակություն ունեցող անհամապատասխանություն, ուստի այդ հիմքով Ընկերությունների հայտերը ենթակա չէին մերժման:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններիս ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն մասնակիցների ներկայացրած հայտերը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը չպետք է գնային առաջարկի մասով մերժեր Ընկերությունների հայտերը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից 28.11.2020թ.-ին ներկայացրած բողոքը և «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 02.12.2020թ.-ին ներկայացված համանման բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.11.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4.3-րդ կետով կայացված՝ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի և «Ֆոտոն» ՍՊԸ-ի հայտերը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**